

Առաջարկ ներկայացնելու հրավեր Արվեստի և հարտարապետության ինստալյացիաներ

«Լյուին՝ ֆո նոյ ուղղությունը» ծրագրի շրջանակներում Հայաստանի մանուկներ բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) նախատեսում է տեղադրել 12 արվեստի և հարտարապետության ինստալյացիաներ Լյուս մարզի Դեբեա գյուղում գտնվող ՔՈԱՖ ՍՄԱԲՐ ավանի տարածքում:


Ծրագիր նպատակն է խթանել ակտիվ զբոսաբերության անը Դեբեդի կիրճում, ինչպես նաև բարձրացնել տարածաբանի մասին իրազեկվածությունը Հայաստանի զբոսաբերության շուկայում՝ տեղի մշակութային, բնապահպանական և հյուրընկալության ոլորտի առաջարկները համապատասխանեցնելով համաշխարհային չափանիշներին:

Մրցույթը կազմակերպվել է «ԵՄ-ն՝ բիզնեսի համար» նախաձեռնության «Նորարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար» ծրագրի շրջանակներում, որը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության Տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից: Այն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» ծրագրի կողմից:

Արվեստի և հարտարապետության բացօթյա ինստալյացիաները (այսուհետ՝ «արվեստի գործեր») նպատակ ունեն մեծացնելու տարածաբանի զբոսաբերային գրավչությունը: Տարածքում, որտեղ ցուցադրված կլինեն արվեստի գործերը, նախատեսվում է տոնավաճառների և փառատոների, բիենալեների, համերգների, ցուցահանդեսների, ինչպես նաև հանդիպումների և կոնֆերանսների անցկացում: Արդյունքում, տարածաբանի այցելող յուրաքանչյուր անձ հնարավորություն կստանա վայելել բնության գեղեցկությունը՝ ներդաշնակ ժամանակակից արվեստին և ՔՈԱՖ ՍՄԱԲՐ ավանի յուրահատուկ հարտարապետական կոնցեպտին (կտրամադրվեն կոնստիտուցիաներ, լուսանկարներ և տեսանյութեր): Արվեստի նման գործերի տեղակայման նպատակներից է նաև լուսեցուն ներհատուկ ազգային գծերն ու արժեքներն ընդգծելն ու ավանդության ին և մշակութային յուրահատկությունները բացահայտելը:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ ՔՈԱՖ-ը հանդես է գալիս «Առաջարկ ներկայացնելու հրավերով»՝ արվեստի և հարտարապետության 12 ինստալյացիաների լավագույն կոնցեպտի և վերջիններիս իրականացման համար՝ որպես մեկ ամբողջական նախագիծ:

Մրցույթին կարող են դիմել ինչպես Հայաստանի Հանրապետությունում գործող կազմակերպությունները, այնպես էլ փորձառու և բոլոր համապատասխան որակավորումներն ունեցող արվեստագետները, հարտարապետները և վարպետները՝ համախմբվելով և ներկայացնելով որպես մեկ ստեղծագործական խումբ (արվեստագետներ, ֆանդակագործներ, դիզայներներ, հարտարապետներ): Այն դեպքում, երբ հայտը ներկայացնում են ստեղծագործական խմբեր/թիմեր, որոնք որևէ գրանցված կազմակերպության աշխատակիցներ չեն, պայմանագիրը կնքվում է ստեղծագործական թիմը/խմբը ներկայացնող ղեկավարի՝ իրավաբանական անձի հետ:



Դիմորդները ազատ են արվեստի գործերի ոճի, նյութերի, չափերի, դրանց տեղակայման ընտրության հարցում՝ միևնույն ժամանակ հավատարիմ մնալով ծրագրի հիմնական նպատակներին և տեսլականին:

***ԿԱՐԵՎՈՐ.** Մինչ մարտի 15-ը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ՔՈԱՖ-ը պատրաստական է կազմակերպել շրջայց ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ավանի տարածքում՝ տեղանքին ծանոթանալու նպատակով:

Ծրագրի ընդհանուր բյուջեն (ինչպես կոնցեպտի մշակման, այնպես էլ իրականացման փուլերում) չպետք է գերազանցի **60.000** եվրոյին համարժեք ՀՀ դրամը:

Ծրագիրը ամբողջությամբ (նախագծում և իրականացում) անհրաժեշտ է իրականացնել 5 ամսում:

***ԿԱՐԵՎՈՐ.** Փաստաթղթերը պետք է մակագրել հետևյալ կերպ՝ «ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԱԼԻՏԱՑԻԱՆԵՐ», ԱՆՈՒՆ/ԱԶԳԱՆՈՒՆ/ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ/ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԹԻՄԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ:

Բոլոր հետաքրքրված դիմորդները իրենց առաջարկները պետք է ներկայացնեն Երևանի Մելիք Ադամյան 2/2 հասցեում գտնվող ՔՈԱՖ-ի գրասենյակ, ինչպես նաև էլեկտրոնային պատճեններն ուղարկեն՝ **tenders@coaf.org** էլեկտրոնային հասցեին մինչև **2022** թվականի մարտի **15**-ը:

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք դիմել մինչ մարտի 12-ը:

Հարցերի դեպքում կարող եք դիմել՝

- Արամ Առաքելյան (+374 91 495059, aram.arakelyan@coaf.org)
- Լիլիթ Ամիրաղյան (+374 77 751411, lilit.amiraghyan@coaf.org)

Ընտրության արդյունքների մասին դիմորդները կտեղեկացվեն էլեկտրոնային նամակով:

Նախագծի հայեցակարգ՝ կոնցեպտ


Համագործակցության մեկնարկից սկսած՝ 5 ամիսների ընթացքում, ընտրված թեկնածուն/ ստեղծագործական թիմը պետք է նախագծի և համակարգի արվեստի և հարտարապետության 12 ինստալյացիաների ստեղծումը և տեղակայումը:

Նախագիծն իրականացվելու է երեք փուլով՝

- Կոնցեպտի ընտրություն
- Իրականացում
- Հետագա սպասարկում

Մրցույթն անց է կացվելու երկու փուլով՝

Առաջին փուլ. Առաջին փուլում գնահատվելու են բոլոր ներկայացված առաջարկները, դրանցից ընտրվելու են լավագույն 3-ը, որոնք կհամապատասխանեն «Գնահատման չափանիշներին» (B կետ):



Երկրորդ փուլ. Ընտրված երեք թիմերը կհանդիպեն ժյուրիի/հանձնաժողովի հետ՝ ներկայացնելու առաջարկվող կոնցեպտները և պատասխանելու հարցերին: Արդյունքում, հանձնաժողովը կընտրի հաղթող թիմին:

***ԿԱՐԵՎՈՒՄ. ՔՈԱՑ-ն իրավասու է պահանջել լրացուցիչ տեղեկություն, որը կարող է նպաստել ընտրության գործընթացի արագացմանը:**

A. Նախագծման պահանջներ

Ամբողջական կոնցեպտում ներկայացված 12 արվեստի գործերը պետք է՝

- լրացնեն մեկը մյուսին՝ ստեղծելով ամբողջական ինստալյացիա: Յուրաքանչյուրը պետք է լինի նախորդի ներդաշնակ և տրամաբանական շարունակությունը, ինչպես նաև համահունչ լինի ծրագրի, Լոու բնաշխարհի, ՔՈԱՑ ՍՄԱԲՐ ավանի և Դեբեդի կիրճի միջավայրի հետ,
- լինեն ամուր և պահպանման նվազագույն ջանքեր պահանջող՝ պատրաստված մնալուն նյութերից, որոնք հարմարեցված կլինին Լոու բնակլիմայական պայմաններին (Դեբեդը բամստ է, իսկ ձմռան ամիսներին առատ ձյուն է տեղում),
- լինեն անվտանգ հանրության համար և չունենան սուր ծայրեր, խոչընդոտներ, որոնք կարող են վնասվածքներ պատճառել:

B. Գնահատում

Հայտերի գնահատումը իրականացվելու է՝ հաշվի առնելով կատարված աշխատանքները, արվեստագետների, նարտարապետների և վարպետների որակավորումները՝ չափանիշների հետևյալ բաշխվածությամբ՝

1. Հստակորեն արտահայտված տեսլականը և կոնցեպտը, էսքիզները, գծագրերը, նախագծային դիզայնը (ցանկացած տարբերակով), որը համահունչ կլինի ծրագրին և ցույց կտա վերջնարդյունքին հասնելու նպատակառոտ դրսևությունը (70%)
2. Նախագծի իրականացման ժամկետները (10%)
3. Ներկայացված մանրամասն բյուջեն՝ ծախսային բոլոր մասերով (20%)


Յուրաքանչյուր արվեստի գործ կգնահատվի 1-10 սանդղակով (1՝ նվազագույն համընկնում, 10՝ ամենաբարձր համընկնում):

Գնահատման հանձնաժողովը իրականացնելու է ներկայացված հայտերի գնահատում՝ առաջնորդվելով «առավելագույն համապատասխանություն պահանջներին» չափանիշներով:

C. Հայտի ներկայացում

Հայտի ներկայացման պահանջներ՝

Դիմորդները պետք է ապահովեն համապատասխանությունը հետևյալ չափանիշներին.



- Փորձառություն արվեստի գործերի ստեղծման նախագծերում, մասնավորապես արվեստ, նարտարապետություն, լանդշաֆտային դիզայն (նորարարությունների և տեխնոլոգիաների օգտագործմամբ):
- Փորձառություն արվեստի գործերի ստեղծման նախագծերի կառավարման ոլորտում:
- Փորձառություն նախագծերի շահառուների և այլ ներգրավված անձանց հետ աշխատանքի ոլորտում:

***ԿԱՐԵՎՈՐ.** Իրավաբանական անձինք ներկայացնում են կազմակերպության գրանցման վկայականը: Զգրանցված խմբերի դեպքում ամբողջ ծրագրի իրականացման ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքվելու է խմբի ներկայացուցչի/ղեկավարի հետ:

Ներկայացվող հայտը (նաև էլեկտրոնային տարբերակը) պետք է ներառի **2** առանձին փաթեթներ՝ կոնցեպտի և ֆինանսական առաջարկի:

- 1. Նախագծի կոնցեպտ (ներկայացման ձևաչափը՝ ազատ)**
 - Ներկայացվող գաղափարի մանրամասն նկարագրություն
 - Ինստալացիաների գծագրեր/էսքիզներ
 - Ինստալացիաների տեխնիկական նկարագրություն՝ ներառյալ տեղեկատվություն օգտագործվող նյութերի, չափերի, գույնային և այլ տեխնիկական լուծումների վերաբերյալ
 - Առաջարկվող ինստալացիաների ոճը և ցուցադրության մեթոդները
 - Ինստալացիաների դասավորությունը տարածքում, վիզուալիզացիա
- 2. Տեղեկատվություն կազմակերպությունների, արվեստագետների, նարտարապետների և վարպետների խմբերի վերաբերյալ**
 - Տվյալ նախագծում ներկայացված բոլոր արվեստագետների, նարտարապետների և վարպետների ինֆոնալիստիկաներ
 - Պետական գրանցման վկայական
 - Նմանատիպ նախագծերի պորտֆոլիո (տեղեկատվությունը պետք է ներառի կատարված առնվազն 3 նմանատիպ նախագծեր)
 - Աշխատանքների իրականացման ժամանակացույց

3. Բյուջե

Ծրագրի իրականացման բյուջեն՝ ծախսերի մանրամասն բացվածքով:

Լեզու

Ներկայացվող կոնցեպտը կարող է լինել հայերեն կամ անգլերեն:

Ուշացված դիմում

Կրիտարկվեն միայն մինչ վերջնաժամկետն ստացված հայտերը:




ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԳՆՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

EU4Business



Implemented by
giz
German Gesellschaft
für Zusammenarbeit
Zusammenarbeit GIZ GmbH



CHILDREN
OF ARMENIA
FUND

Հղումներ

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ

Կայք- <https://www.coaf.org/en/>

Սոցիալական մեդիայի հարթակներ - [Facebook](#), [Instagram](#), [Twitter](#), [LinkedIn](#), [Youtube](#), [Pinterest](#),
[Vimeo](#), [Medium](#)

Դեբեդի Կիրն




ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՅԱՍՏԱՆԻ ԳԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

EU4Business



Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by
giz
Deutsche Gesellschaft
für Internationale
Zusammenarbeit (GIZ) GmbH



CHILDREN
OF ARMENIA
FUND

Կայք- <https://visitdebedcanyon.com/>

Սոցիալական մեդիայի հարթակներ - [Facebook](#), [Instagram](#), [Twitter](#), [Youtube](#), [Pinterest](#)

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ - [\[COAF SMART Campus\] Debed Canyon](#)